



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2019 թվականի N 1215-Ա

**ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի 9 դեկտեմբերի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով, 48-րդ կետով, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հատակագիծը, հաշվի առնելով այն , որ Տաշիր քաղաքի 06-008-0116-0021 կադաստրային ծածկագրով 0,00442 հա հողամասի վրա ինքնական կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնական կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լոռու մարզի Տաշիր քաղաքի 06-008-0116-0021 համայնքին պատկանող 0,00442 հա հողամասի վրա քաղաքացի Արթուր Սեմյոնի Հովհաննիսյանի կողմից ինքնական կառուցված 37,57քմ մակերեսով ավտոտնակը նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող 37,57քմ մակերեսով ավտոտնակը համարել օրինական՝ համաձայն ներկայացվող շինությունների հատակագծի և բնութագրի:
3. Հողամասի սահմանները որոշվում են «Արտյոմ Սաքանյան» ԱԶ կողմից կազմված և

Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Արթուր Սեմյոնի Հովհաննիսյանին առաջարկել, օրինականացված կառույցը և կից հողամասը պետական գրանցում ստանալուց հետո, ուղղակի վաճառքի կարգով գնել գործող տուրքի և հողամասի կադաստրային արժեքի չափով՝

1) Հողամասի համար՝ 9810 (ինը հազար ութ հարյուր տասը) ՀՀ դրամ,
2) Ավտոտնակ՝ 20660 (քսան հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ :

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք,
6. ք.Տաշիր, 6-րդ թաղամաս, Գետափնյա փողոց թիվ 8/2 ավտոտնակ:
7. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2019թ. դեկտեմբերի 10
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2019 թվականի N 1216-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Վլոդյա Զիվանի, Գեղեցիկ Պետրոսի, Քերոբ Վլոդյայի Սողոյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N2461082, տրված՝ 09.04.2008/ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Պուշկինի փողոց-131 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 6-րդ թաղամաս, Պուշկինի փողոց, թիվ 131 բնակելի տուն հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏՈՐ

Ն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



2019թ. դեկտեմբերի 10

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2019 թվականի N 1217-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3 կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 12.12.2014թ. N 75 Ն որոշման 8.2 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բաժին 1, խումբ 1, դաս 1- ի 4111 հոդվածից 66,0 հազ. դրամը տեղափոխել 4212 հոդված, 70,0 հազ. դրամը տեղափոխել 4214 հոդված և 20,0 հազ. դրամը տեղափոխել բաժին 6, խումբ 4, դաս 1- ի 4269 հոդված:
2. Բաժին 6, խումբ 6, դաս 1- ի 4251 հոդվածից 290,0 հազ. դրամը տեղափոխել 4252 հոդված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2019թ. դեկտեմբերի 13
ք.Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 1218-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետը, 48-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Ռուբեն Սիմոնի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող գույքին / անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N2388522, տրված՝ 04.11.2010/ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Գետափնյա փողոց, թաղամաս 6, տաղավար 29 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 6-րդ թաղամաս, Գետափնյա փողոց, թիվ 104/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2019թ. դեկտեմբերի 16

ք.Տաշիր